600.0211.14.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2019 թվականի №211Ա

քաղ. Երևան

811-821ՄՀՑ ԵՎ 852-862ՄՀՑ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՆԱԽԱՌՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «811-821ՄՀՑ և 852-862ՄՀՑ, 1765-1785ՄՀՑ և 1860-1880ՄՀՑ ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններ տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման կանոնները հաստատելու մասին» №697Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական ընկերությանը ճանաչել որպես 811-821ՄՀՑ և 852-862ՄՀՑ ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու նպատակով կազմակերպված մրցույթում նախարակավորված ընկերություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
14 հունիսի 2019թ.